

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 52/2

4 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Իոեն Մես» ՍՊԸ ներկայացուցչի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 04.09.2015 թ-ի թիվ 293 որոշման դեմ:

«Իոեն Մես» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը 04.09.2015 թ-ին կայացրել է թիվ 293 որոշումը (այսուհետև նաև որոշում): Որոշումը դիմողը ստացել է 17.09.2015 թ-ին փոստային առաքման միջոցով: Այստեղից հետևում է, որ որոշումը ուժի մեջ է մտել 18.09.2015 թ-ին: Որոշման նկարագրական և պատճառաբանական մասում նշվել է, որ 04.09.2015 թ-ի դրությամբ «Իոեն Մես» ՍՊԸ-ի չկատարած հարկային պարտավորությունները կազմում են 7.185.304 դրամ պետական տուրք՝ 7.185.304 դրամ, որից ապառք 1.484.879 դրամ, տույժ 5.700.425 դրամ, որը ենթակա է գանձման:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58. 88 հոդվածներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 04.09.2015 թ-ի թիվ 293 որոշմամբ «Իոեն Մես» ՍՊԸ-ից գանձման է առաջադրվել 7.185.304 դրամ պարտավորության գումար:

«Իոեն Մես» ՍՊԸ-ին (այսուհետև նաև ընկերություն) պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Արզաքանի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի (թիվ 14/76 հորատանցք) լիցենզիայի 2011 և 2012 թվականների համար տարեկան պետական տուրքը վճարվել է պատշաճ ժամանակին, որը հիմնավորվում է 23.10.2013 թ-ին տրված 9009 տեղեկանքով: Վերջինիս համաձայն պետական տուրքի մասով պարտավորություն առկա չէ: Պետական տուրքի գումարները վճարվել են ամբողջությամբ, սակայն վճարման անդորրագրերը չեն պահպանվել:

2013 թ-ի պետական տուրքը յուրացվել է: Մասնավորապես, 2013 թ-ի նոյեմբեր ամսին 500.000 դրամ է փոխանցվել Նարինե Գրիգորյանին, որ վեջինս վճարի ընկերությանը պատկանող ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի լիցենզիայի 2013 թ-ի տարեկան պետական տուրքը: Սակայն Նարինե Գրիգորյանը այդ գումարը չի վճարել, տիրանալով վերջինիս, այն օգտագործել է իր կարիքների համար: Վերջերս տեղեկանալով այդ մասին 16.09.2015 թ-ին վճարվել է մեկ տարվա լիցենզիայի գումարը: Այս մասով արդեն իսկ դիմում է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազին:

2014 թ-ի տարեկան պետական տուրքի գումարը վճարվել է 09.10.2014 թ-ին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 35-րդ, 36.1 հոդվածներից հստակ հետևում է, որ պետական տուրքն այս դեպքում պետք է հաշվառի ՀՀ ֆինանսների նախարարությունը (հարկային կոմիտեն), իսկ եթե իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման արդյունքում է պետական տուրքի վճարումը ուշացել կամ չի կատարվել, ապա վճարման պարտավորությունը կրում է պետական մարմինը կամ

վերջինիս աշխատակիցը: Այն, որ 2011 և 2012 թվականների տարեկան պետական տուրքը վճարվել է, հիմնավորվում է գանձող մարմնի կողմից (հարկային տեսչություն) 23.10.2013 թ-ին տրված թիվ 9009 տեղեկանքով, որի համաձայն 22.10.2013 թ-ի դրությամբ ընկերությունն ինչպես պետական տուրքի, այնպես էլ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորություններ չունի:

Վերը նշվածից հետևում է, որ 2011 և 2012 թվականների տարեկան պետական տուրքի գումարները վճարվել են, իսկ 2013 թ-ին՝ յուրացվել է, այսինքն՝ ընկերությունը որևէ դիտավորություն չի ունեցել տարեկան պետական տուրքի գծով իր պարտավորությունները չկատարելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 04.09.2015 թ-ի թիվ 293 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Իռեն Մես» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 04.09.2015 թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 7.185.304 դրամ, այդ թվում՝ պետական տուրքի գծով ապառք 1.484.879 դրամ, տույժ 5.700.425 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 04.09.2015 թ-ին ընդունվել է թիվ 293 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Իռեն Մես» ՍՊԸ-ից 7.185.304 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում գանգատում բերված միակ ապացույցը, որը հիմնավորում է «Իռեն Մես» ՍՊԸ-ի կողմից Որոշումամբ գանձման առաջադրված տարեկան պետական տուրքի գումարները վճարված լինելու հանգամանքը, հանդիսանում է 23.10.2013 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի կողմից տրված թիվ 9009 տեղեկանքը (գանգատին կցված է տեղեկանքի պատճենը), որի համաձայն 22.10.2013 թ-ի դրությամբ ընկերությունը պետական տուրքի գծով պարտավորություններ չունի:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ գանգատին կից ներկայացված ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի 23.10.2013 թ-ի թիվ 9009 տեղեկանքում բերված տվյալները չեն համապատասխանում իրականությանը:

Այսպես, Ա/Ձ Գևորգ Դաբաղյանը (հաշվառված է Մաշտոցի ՀՏ-ում) ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետին հասցեագրված 23.10.2013 թ-ի դիմումով խնդրել է տրամադրել տեղեկանք 22.10.2013 թ-ի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունների առկայության վերաբերյալ: Ա/Ձ Գևորգ Դաբաղյանի 23.10.2013 թ-ի դիմումին ի պատասխան ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի կողմից 23.10.2013 թ-ին տրվել է թիվ 9009 տեղեկանքը, որի համաձայն 22.10.2013 թ-ի դրությամբ Ա/Ձ Գևորգ Դաբաղյանի դեբետային մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 650.233 դրամ:

Վերոգրյալ փաստական հանգամանքներից հետևում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ պետի 23.10.2013 թ-ի թիվ 9009 տեղեկանքը վերաբերվում է և տրվել է ոչ թե «Իռեն Մես» ՍՊԸ-ին, այլ՝ Ա/Ձ Գևորգ Դաբադյանին:

Քննարկվող դեպքում սույն գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհիմնավորեր ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 04.09.2015 թ-ի թիվ 293 որոշմամբ պետական տուրքի գծով գանձման առաջադրված պարտավորությունները «Իռեն Մես» ՍՊԸ-ի կողմից վճարված լինելու հանգամանքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 04.09.2015 թ-ի թիվ 293 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ